*ընդ Սարմատիա եւ ընդ Սկիւթից*[1] *աշխարհն։* 81 *Որոյ ըստ մտից, ասէ Պտղ[ո]մէոս*[2]*, զԱդոն եւ զԱղանդան եւ զՍոնդաս եւ զԳեռուա[յ] ազգս՝ հոմանուն գետաւք, որ ի Կաւկասա[յ] հոսի[ն]*[3] *ի ծով, մինչեւ ցԱղուանից սահմանն։*

82 *Եւ են ի Սարմատիո[յ] համարեալ այսպէս։* 83 *Սկսեալ ի մտից յելս կոյս՝ նախ ազգ Ա-ղ"ուանաց Աշդիգոր*[4]*։* 84 *Որ ըստ հարաւո[յ]՝ համաբնակ նոցա Խեբուրք եւ Քութէտք*[5] *եւ [Սկիւ-միք եւ]*[6] *Արգ[ո]ւել*[7] *եւ Մարգոյլ եւ Թակոյր (եւ Ալանք են)*[8]*։* 85 *Յետ Դիգորին*[9] *Արդոզ աշխարհ ի*[10] *Կաւկասին լերանցն, ուս[տ]ի*[11] *հոսի գետն* [21ա] *Արմնա[յ]*[12]*, եւ գնալով ընդ հիւսիսի ընդ դաշտ անբաւս՝ խառնի յԱթլ։* 86 *Եւ ի նոյն լերինն յետ Արդոզե[ա]ն*[13] *ազգին բնակեն Դաջանք*[14]*, [Փինճք]*[15] *Դուալք, Ցըխոյք*[16]*, [Ա]փուրքա, Ծանարքա*[17]*, յորում՝ Ալանաց դուռն եւ միւս դուռն, որ ասի*ᵇ *Ծեքեն*[18]*՝ հոմանուն ազգի։* 87 *Եւ ապա՝ Թուժք*[19] *եւ Խուժք*[20] *եւ Խիստք*[21] *Մարդակերք՝ ապա՝ Ցղաւատք*[22]*, ապա՝ Գուդամակարք*[23]*, ապա՝ Դուրծկք, ապա՝ Դիդո[յ]ք*[24]*, ապա՝ Ղեկք*[25]*, ապա՝ Տապոտարանք*[26]*, ապա՝* ᵢ*Աղուտականք*[27]*, ապա՝*

---

1 *S* Սկիւթիոյ *փխ* Սկիւթից *(V)*

2 *V* Պտղմէոս *փխ* Պտղ[ո]մէոս *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց. օր.՝ նախ. Ա.30, Բ.33, 37, Դ.33, Ե.206)*

3 *V* յոսիս, *S* հոսի *փխ* հոսի[ն] *(վեր., հմմտ.* **ն → ա***)*

4 *VS* Աղուանաց Աշտիգոր *փխ* Աղ"ուանաց Աշդիգոր *(վեր., իմա՛* Ալանաց (Աղուանք*-ի սեռականը միշտ* Աղուան**ից** *է) եւ* Աշ-**Դ**իգոր*, ինչպէս որ 3 տող ստորեւ է, հմմտ. բարբառային* **Դ → Տ***)*

5 *S* Քութետք *փխ* Քութէտք *(V. համաոստում՝* Քուդեւոք *(AE),* Քուդետք *(DPv) եւ* Գութդէք *(v*[1]*))*

6 *VS չիք* Սկիւմիք եւ *(վեր.՝ ըստ համաոստի DPv-ի (AE* Սիյիմք*). տե՛ս* **եւ ... եւ**. *ըստ Երեմեանի՝ վերականգնելի են՝* Արգուել, որ է Մարգուել, եւ Սկիւմիք, [որ են] Թակոյր*)*

7 *V* Արգեալ *փխ* Արգուել *(վեր. Սուքրեանի. համաոստում* Արգաւետք *է, իսկ յաջորդը՝* Մարգոյլք*)*

8 *Փակագծերը նշում են, որ* Ալանք *են նաեւ թուարկուածները, ճիշտ՝ ինչպէս նախորդ* Աշդիգոր*-ը*

9 *VS* Դիքորին *փխ* Դիգորին *(վեր., ինչպէս որ նախորդ տողում է, հմմտ. բարբառային* **Գ → Ք***)*

10 *S* յԱրդոզ աշխարհի *փխ* Արդոզ աշխարհ ի *(V.* աշխարհ*-ը գաղափարագրով է. Սուքրեանը միտքն ընկալել է՝* «Ալանք[ն] յետ Դիգորին են՝ յԱրդոզ աշխարհի[ն]»*, բայց հմմտ. վերեւում եւ յաջորդ տողը՝* «յետ Արդոզեան **ազգին** բնակեն...»*)*

11 *V* ուսի *փխ* ուստի *(վեր. Սուքրեանի)*

12 *Այս* «գետն Արմնայ» *վերծանութեան փոխարէն, գուցէ, կարելի է վերականգնելի համարել՝* «գետ Նարտնա[յ]» *կամ* «գետ[ն] Նարտնա[յ]» *(հմմտ. ուշ երկաթագիր* **Տ → Մ → Տ** *յաճախադէպ շփոթը), քանի որ երկի բաւական տեղեկացուած հեղինակի մօտ Թերեք գետի՝ օս-ալանական միջավայր յուշող* Նարտն *անուանաձեւն աւելի իրական է թւում, քան V-ի գրչի* Արմն*-ը կամ* Նարմն*-ը. ճիշտ է, գետանունը հայցական* զԱրմ *ձեւով կրկնւում է նաեւ քիչ յետոյ (նախ. Ե.88)*

13 *V* Արդոզեն, *S* Արդողեան *փխ* Արդոզե[ա]ն *(վեր.)*

14 *Ըստ Երեմեանի՝ վերականգնելի է* Ռաճանք

15 *VS չիք* Փինճք *(վեր. Երեմեանի՝ ըստ համաոստի, որտեղ* «Դաճանք *(AE* Գաճանք*),* Փինճք*,* Դուալք *(AE* Դուաղք*)»* է*)*

16 *S* Ծըխոյք *փխ* Ցըխոյք *(V. համաոստում՝* Խոնք *(AE),* Հոնք *(Pv),* Ցխոյնք *(Dv*[1]*) է. ըստ Երեմեանի՝ վեր-նելի է* Ցխոյմք*, որից առաջ նաեւ՝* [Հոնք]*)*

17 *V* Փուրքածանարքա, *S* Փուրքա, Ծանարքայ *փխ* Ափուրքա, Ծանարքա *(վեր., համաոստում առաջինը* Ափուլք *է, ուստի՝ բառավերջի* **ա***-ն կարող է յայտնուած համարուել գրչի ինքնաթելադրութեան սխալից. ըստ Երեմեանի՝ հիմքում եղել է* Աւսուրք *ցեղանունը, որի* Ավսուրք *տարբերակի* **վս** *տառերը միախառնուել են* **փ***-ի. Ծանարքա-ի աւելորդ* **ա***-ի ծագումը դժուար է բացատրել)*

18 *V* սրասիք ծեքեն, *S* որ ասի Քծեքեն *փխ* որ ասի^ᵇ Ծեքեն *(վեր., հմմտ. բոլորագիր* **ո → ս***. համաոստում* Ծեքան *կամ* Ծիծեն *է. ըստ Երեմեանի՝ վերականգնելի է* Ծելքան*)*

19 *S* Դուծք *փխ* Թուժք *(V. գրիչն իր գրած* Թուծք*-ի* **ծ***-ի վրայ կայծակնաձեւ նշան է դրել եւ լուսանցքում սրբագրել՝* **ժ**. *Սուքրեանի վրիպեալ ծնթ-նն է.* «Ցօր. *Թուձք». համաոստում* Թուժք *է եւ* Թուշք*)*

20 *Ըստ Երեմեանի՝ վեր-լի է* Խունձք *(DPv՝* Խուշք*)*

21 *Գրիչը բառն սկսել է* **ք***-ով, բայց մաքրել եւ վրան տեղաւորել է* **խ**. *համաոստում՝* Քիսք *եւ* Քուստք

22 *S* Ձղաւատք *փխ* Ցղաւատք *(V. համաոստում* Ցխաւատք *է, v*[1] Ցուախատք*)*

23 *VS* Գուգամակարք *փխ* Գուդամակարք *(վեր.՝ ըստ համաոստի, հմմտ. բոլորագիր* **դ → գ***)*

24 *VS* Դիդոք *փխ* Դիդո[յ]ք *(վեր.՝ ըստ համաոստի)*

25 *VS* Լեկք *փխ* Ղեկք *(վեր.՝ ըստ համաոստի.* Լ*՝ սկզբնատառը, թերեւս, մեր գրիչն է նախընտրել՝ իր ժամանակ շրջանառու ցեղանուանաձեւից)*

26 *Համաոստում՝* Տապաստաւանք *կամ* ᵏᵘՏապաստիանք*, որը V-ի հետ համադրելով՝ գուցէ, կարելի է վերականգնելի համարել* Տապ[ա]ստարանք

27 *VS* Ցաղուտականք *փխ* ᵢԱղուտականք *(վեր.՝ ըստ համաոստի՝ զոյգ* **ա***-երի միջեւ կիսաձայն* **յ***-ն համարելով գրչի ինքնաթելադրութեան սխալ)*